Հովիւներուն երկրպագութիւնը. — «Ապա հովիւքն ի տեղւոջն յայնմիկ բնակեալ զոր յառաջ ասացաք, բայց ոչխարք միայն հօտից ի յօդեաց եւ ի յայծից բացուստ ի հեռաստանէ, որ արածէին ի լերինս եւ ի դաշտս, և բերեալ իւրաքանչիւր ոք յերեկօրեայ ի փարախ զհօտս իւրեանց մակաղէին, և զգիշերն ամենայն արթնութեամբ պահէին մինչև ցառաւօտն։ Եւ հրեշտակ Տեառն երևեալ նոցա և փառք Տեառն ծագեաց ի նոսա. և երկեան երկիւղ մեծ, ձայն տուեալ հովուացն՝ ժողովեցան ի մի տեղի, և ասէին ցմիմեանս, զի՞նչ է բարբառ աղաղակիս այս որ եղեւ առ մեզ, զոր ոչ գիտեմք։ Իսկ հրեշտակն դարձեալ ասէ ցնոսա. մի՛ երկնչիք արք իմաստունք և հանճարեղք, որ ժողովեալ կայք ի միասին, զի ահաւասիկ աւետարանեմ ձեզ ուրախութիւն մեծ, որ ծնաւ ձեզ այսօր Փրկիչ, որ է օծեալ Տէր ի քաղաքի Դաւթի։ Եւ այս ձեզ նշան ամենեցունցդ, յորժամ երթայցէք ի յայրն, գտանիցէք անդ մանուկ մի պատեալ ի խանձարուրս և եղեալ ի մսուր եզանց։ Եւ նոյն ժամայն ընդ ասել հրեշտակին, փութացեալ հովուացն՝ անդ հասանէին, որք էին արք թուով հնգետասան, և նոցա տեսեալ զՅիսուս՝ անկեալ երկիրպագանէին նմա առաջի նորա, և ի ձայն մեծ փառաւոր առնէին զԱստուած և ասէին փառք ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն։ Եւ զայս ասացեալ հովուացն՝ գնացին իւրաքանչիւր ի հօտս իւրեանց՝ փառաւորելով զՔրիստոս» (Թան. Բ. էջ 41–2)։

Հովուանոցի եկեղեցիին աւանդութիւնները. — Բեթղեհէմի արեւելեան կողմը կը գտնուի Պէյթ Սահուր փոքրիկ գիւղը «հանդէպ Բեթղեհէմի». ասոր սահմա-